UNION OF ADVANCED TECHNOLOGY ENTERPRISES

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ

1-10 Հուլիս 2021

ԴԻԼԻՋԱՆ

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔ

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը նախաձեռնում է ամառային ճամբար, որը կհամախմբի սփյուռքի ու Հայաստանի երիտասարդությունը, կամրապնդի ՀՀ բոլոր մարզերում ապրող երեխաների միջև կապը և հետագա համագործակցությունը, կհանդիսանա ինժեներական նախնական գիտելիքների ու հմտությունների ձևավորման հիանալի հարթակ:

Ճամբարի մասնակիցներ

Ճամբարը նախատեսված է **11-14 տարեկան** երիտասարդների համար:

Ճամբարի մասնակիցներն են՝

- Հայաստանում և Վրաստանում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների սաները,
- Սփյուռքում ապրող երեխաները,
- Արմաթ լաբորատորիա չհաճախող, սակայն տեխնոլոգիական ճամբարին մասնակցել ցանկացողները,
- Հայաստանյան խոշոր ընկերությունների աշխատակիցների երեխաները:

Ճամբարի օրակարգը

Ճամբարի տևողությունն է **9 օր,** որն ունի հատուկ մշակված օրակարգ:

Օրակարգը ներառելու է (այն կներկայացվի գրանցված մասնակիցներին)՝

- ինժեներական գիտելիքների, ծրագրավորման և ռոբոտաշինության սկզբնական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման վարժանքներ,
- դասընթացներ,
- առաջադրանքներ,
- մրցույթներ,
- ժամանցային ծրագիր՝ թիմային սպորտային խաղեր, ինտելեկտուալ մրցույթներ, մշակութային միջոցառումներ և այլն:

Կարևորելով հայրենասիրության և սեփական երկրին նկատմամբ կապվածության սերմանումը, ճամբարի հիմնական ուղղություններից է **հայրենաճանաչությանն ուղղված միջոցառումները՝**

- արշավներ,
- ազգային պարերի դասընթացներ,
- «Ողջ մնալու արվեստ» (առաջին բուժօգնություն, ալպինիզմ, մարտավարություն, կրակային պատրաստություն):

Այսպիսով, ճամբարի ընթացքում կազմակերպվող միջոցառումների ու առաջադրանքների միջոցով «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների երեխաներն իրենց փորձը և գիտելիքները կփոխանցեն իրենց հասակակիցներին, ինչը *բաց երկխոսության, թիմային աշխատանքի, փորձի և գիտելիքների կիսման, կապերի հաստատման հիանալի հնարավորություն է լինելու*:

Պայմանները ճամբարում

- Ցանկապատված պահպանվող տարածք
- Գիշերակացի համար բարձրակարգ պայմաններ
- Երեքանգամյա սնունդ
- Հատուկ վերապատրաստում անցած ջոկատավարներ, ովքեր ունենալով մեծ փորձ ճամբարների կազմակերպման ոլորտում կզբաղվեն ինչպես երեխաների խնամքով, այնպես էլ կուղղորդեն և կաջակցեն մրցութային առաջադրանքների իրականացման ժամանակ
- Ճամբարի տարածքում գործում է բուժկետ, որտեղ երեխաները ճամբարի սկզբում կանցնեն բժշկական ստուգում և կիրականացվի ամենօրյա ջերմաչափում, կապահովվի համավարակի դեմ ուղղված բոլոր կանխարգելիչ միջոցառումները
- Անձնական հիգիենայի ապահովման համար ճամբարում կան բոլոր համապատասխան պայմանները /առանձին լոգասենյակներ/
- Սենյակները համալրված են անհրաժեշտ գույքով, կատարվում է ամենօրյա մաքրում:

Մասնակցության պայմաններ

1. Տեղափոխում Երևանից ճամբարի տարածք և հետադարձ
2. 9 օրվա կեցություն և սնունդ ճամբարի տարածքում
3. Մասնակցություն ճամբարի շրջանակներում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:
4. **Մեկ երեխայի ճամբարում մասնակցության արժեքը կազմում է՝ 150.000 ՀՀ դրամ:**

***Մրցույթների և առաջադրանքների իրականացման համար ողջ անհրաժեշտ գործիքակազմը և սարքավորումները տրամադրվում են կազմակերպիչների կողմից:**
***Երեխայի մասնակցությունը հաստատվելուց հետո ծնողներից մեկի և ճամբարի կազմակերպիչ հանդիսացող՝ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության միջև կնքվում է պայմանագիր, որի համաձայն ճամբարի կազմակերպիչները ստանձնում են ճամբարի կազմակերպման, երեխայի լիարժեք մասնակցության ապահովման պատասխանատվությունը:**

Մասնակցության համար հարկավոր է լրացնել հետևյալ հայտը մինչև հունիսի 13-ը ներառյալ:

Պատասխանատու՝
Սեդրակ Վարդանյան Հեռ. +37498406501
Էլ հասցե՝ sedrak.vardanyan@uite.org